ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ՝ arminenoy@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"06" օգոստոսի 2012 թվականի N 138– Ա

## <<ՄԱՐԻՆԵ ՅԱՐԱԼՅԱՆ>> ԱՁ-ԻՆ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՐԿՈՒՄ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 37 հոդվածի 12 և 17 կետերով, հաշվի առնելով <<Մարինե Յարալյան,, ԱՁ տնօրեն Մարինե Յարալյանի 06.08.2012 թ դիմումը և Նոյեմբերյանի քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Մեխակ Ամիրաղյանի զեկուցագիրը՝ որոշում եմ.*

1. Քաղաքապետարանի վարչական շենքի երրորդ հարկի թվով 1 /մեկ/ աշխատասենյակ /13.50 քմ մակերեսով/ վարձակալական հիմունքներով՝ 5 /հինգ/ տարի ժամկետով, հատկացնել <<Մարինե Յարալյան>> ԱՁ-ին:
   1) տարածքի վարձակալության համար կնքել համապատասխան պայմանագիր՝ տարածքի վարձավճար սահմանելով 1 /մեկ/ քմ-500 /հինգ հարյուր/ ՀՀ դրամ, ամսական-6750 ՀՀ դրամ ընդհանուր գումարով:
2. Որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Նոյեմբերյանի քաղաքապետարանի գլխավոր մասնագետ Մեխակ Ամիրաղյանին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ